# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լերմոնտովո համայնք, 2խճ. 5
էլ.փոստ՝ lermontovo.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«17 » մայիսի 2021 թվականի N 33 - Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 104-րդ հոդվածի 5-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների անցկացման համար Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի տարածքում տեղամասային կենտրոն սահմանել մանկապարտեզի շենքը (հասցեն՝ գ.Լերմոնտովո, 2խճ. թիվ 7):
2. Սույն որոշման մասին տեղեկացնել՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանմանը, թիվ 24 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լերմոնտովո համայնք, 2խճ. 5
էլ.հասցե՝ lermontovo.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 17» մայիսի 2021 թվականի N 34 - Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝

որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին նախընտրական քարոզչություն իրականացնելու համար քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղը՝

Մշակույթի կենտրոնի շենք՝ հասցեն գ.Լերմոնտովո, 2 փողոց, շենք 4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ